



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

0010. ք.Երևան. Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
Հեռ.՝ 589080
Ֆաքս՝ +374 011 62 17 34
www.mud.am
E-mail: info@mud.am

19.05.2015թ. N01/13.1/2588-15

ՁերN-----առ-----

ՀՀ ֆինանսների նախարար
պարոն Գագիկ Խաչատրյանին

ՀՀ տարածքային կառավարման և
արտակարգ իրավիճակների նախարար
պարոն Արմեն Երիցյանին

ՀՀ Շիրակի մարզպետ
պարոն Ֆելիքս Յուլակյանին

Գյումրու քաղաքապետ
պարոն Սամվել Բալասանյանին

Հարգելի պարոնայք

Ձեր քննարկմանն է ներկայացվում «Իրավունք վերապահելու մասին»
ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Խնդրում եմ հնարավոր սեղմ ժամկետում ներկայացնել Ձեր կարծիքը՝ որոշման
նախագծի վերաբերյալ:

Առդիր՝ 3 էջ, 1 ֆայլ:

Հարգանքով

Նարեկ Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

..... 2015 թվականի N-Ա

ԻՐԱՎՈՒՆՔ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան Հայաստանի Հանրապետությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով Գյումրի քաղաքի Մուշ-2 և Անի թաղամասերում 2012 թվականին կառուցված բազմաբնակարան շենքերից բնակարան ստացած (բնակարանների բաշխման վիճակահանությանը մասնակցած և բնակարանի բանալիները ստացած)՝ գույքի տիրապետումը ստանձնած անձանց մահվան դեպքում (եթե բնակարանը ստացել է մեկ անձով, կամ եթե բնակարան ստացած բոլոր անձինք մահացել են) նրանց հատկացված բնակարանների նվիրատվության պայմանագրի կնքման նվիրառուի իրավունքը վերապահել մահացածի ժառանգությունն ընդունած այն ժառանգներին (այսուհետ՝ ժառանգներ), որոնք այդ բնակարանն իրենց հատկացնելու վերաբերյալ դիմում են ներկայացրել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանները ժառանգներին է հատկացվում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգությունն ընդունելու փաստը հաստատող փաստաթղթի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և նրանց միջև կնքված նվիրատվության պայմանագրի հիման վրա, մահացած անձի կողմից մինչև բնակարանը ստանալը զբաղեցված ոչ հիմնական շինությունը կամ ժամանակավոր կացարանը Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման 2-րդ կետի 5.1-ին, 5.2-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների համաձայն բնակությունից ազատելու և քանդելու պայմանով:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված նվիրատվության պայմանագրերի նոտարական վավերացման և դրանցից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են սույն որոշման 2-րդ կետի համաձայն նվիրատվության պայմանագիր կնքած ժառանգների միջոցների հաշվին:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված մահացած անձանց ժառանգներ ի հայտ չգալու դեպքում նրանց հատկացված բնակարանները՝ առանց օրինական հիմքերի զբաղեցված լինելու դեպքում, ենթակա են ազատման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԻՐԱՎՈՒՆՔ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

	Իրավական ակտի հիմնավորումը
1.	Անհրաժեշտությունը
	<p>Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Գյումրի քաղաքի Մուշ-2 և Անի թաղամասերում 2012 թվականին կառուցված շենքերից բնակարան ստացած և բնակարան ստանալուց հետո մահացած անձանց հատկացված բնակարանների (այսուհետ՝ բնակարան) նկատմամբ իրավահաջորդության հետ կապված հարցերի կարգավորման անհրաժեշտությամբ:</p>
2.	Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
	<p>Ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքի Մուշ-2 և Անի թաղամասերում 2012 թվականին կառուցված շենքերից (այսուհետ՝ Շենքեր) բնակարան ստացած անձանցից 2015 թվականի մայիսի 17-ի դրությամբ 11-ը (ցուցակը կցվում է) մահացել են (բնակարանը ստացել էին մեկ անձով, կամ բնակարան ստացած բոլոր անձինք մահացել են), որոնցից 2-ը նախքան բնակարանների բանալիները ստանալը, իսկ 9-ը բնակարանի բանալիները ստանալուց հետո: Ընդ որում, ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղեկատվության համաձայն թիվը ճշտվում է և ունի աճման միտում:</p> <p>Նշված բնակարանների նկատմամբ այդ անձանց (այսուհետ՝ քաղաքացիներ)՝ սեփականության իրավունքը մինչև նրանց մահանալը գրանցված լինելու դեպքում նրանց մահից հետո այդ բնակարանները կընդգրկվեին քաղաքացիների ժառանգության զանգվածի մեջ և օրենսդրությամբ սահմանված կարգով կփոխանցվեին նրանց ժառանգությունն ընդունած ժառանգներին: Սակայն հատկացված բնակարանների նկատմամբ քաղաքացիների սեփականության իրավունքը գրանցված չլինելու պարագայում խնդիրը գործող ՀՀ օրենսդրության շրջանակներում չի կարգավորվում:</p> <p>Հաշվի առնելով, որ բնակարանները քաղաքացիների օրինական տիրապետմանն են հանձնվել դեռևս 2012 թվականին և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործընթացը չիրականացնելը պայմանավորված չի եղել քաղաքացիների գործողություններով կամ անգործությամբ, որոշման նախագծով առաջարկվում է Շենքերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո այդ բնակարանների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հնարավորություն ընձեռել մահացած քաղաքացիների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգությունն ընդունած այն ժառանգներին, որոնք այդ բնակարանն իրենց հատկացնելու վերաբերյալ դիմում են ներկայացրել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն:</p>
3.	Կարգավորման նպատակը և բնույթը
	<p>Որոշման նախագծի ընդունման նպատակն է Ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքի Մուշ-2 և Անի թաղամասերում 2012 թվականին կառուցված շենքերից բնակարան ստացած և բնակարանը ստանալուց հետո մահացած անձանց հատկացված բնակարանների սեփականատերեր կնքման նվիրառուի իրավունքը վերապահել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մահացածի ժառանգությունն ընդունած</p>

	ժառանգներին:
4.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք
	Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից:
5.	Ակնկալվող արդյունքը
	Որոշման նախագծի ընդունմամբ ակնկալվում է կարգավորել Ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքի Մուշ-2 և Անի թաղամասերում 2012 թվականին կառուցված շենքերից բնակարան ստացած և բնակարան ստանալուց հետո մահացած անձանց հատկացված բնակարանների նկատմամբ իրավահաջորդության հետ կապված հարցերը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԻՐԱՎՈՒՆՔ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ
ԿԱՄ ՆՎԱՋԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Իրավունք վերապահելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծն ընդունվելու դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ չեն առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԻՐԱՎՈՒՆՔ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
ԸՆԴՈՒՆՎԵԼԻՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.	Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը
	«Իրավունք վերապահելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտություն չի առաջանում:
2.	Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը
	Որոշման նախագծով կարգավորմանն առաջարկվող հարցերի մասով միջազգային պայմանագրերով պարտավորություններ չեն ստանձնվել: